



## ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ Հովիւ՝ Վեր. Տիգրան Ծանլեան

### ՏԵՐԸ ԿԱՐՈՂ Է

*«Ուստի բողոքովին կարող ալ է սպրեցնելու զանոնք որ իրմով Աստուծոյ կու գան, որովհետեւ ինք միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու:» Եբր. 7:25*

Այն մարդը որ համարձակութիւն կ'ունենայ Աստուծոյ սահմանաբակելու, Աստուծոյ չնանչնար: Այդպիսի մարդ մը կարողալով Աստուածաշունչը կ'ըսէ, «Ես չեմ հաւատար, անկարելի է»: Սակայն Տիրոջը համար ամէն բան կարելի է:

Օր մը Սենեքերիմ, Ասորեստանի թագաւորը յարձակեցաւ Յուդայի Եզեկիա թագաւորին վրայ: Եզեկիա Աքբազի որդին էր, քսանհինգ տարեկանին թագաւոր ըլլալով քսանհինը տարիներ թագաւորեց. անհկա Աստուծոյ սպաւիհող թագաւոր մը եղաւ: Երբ Սենեքերիմ հսկայ բանակներով եկաւ, Ասիա ծառաներ որկեց Երուսաղէմ, որոնք ըսին, «Գուք որո՞ւ ապաւինելով պաշարման մէջ կը մնաք. չէ որ Եզեկիա ձեզ գլխէ կը հանէ, անօթութեամբ եւ ծառաով պիտի մեռնիք»: Նաեւ Սենեքերիմ հայհոյեց Իսրայէլի Աստուծոյն ու Ամաս կը գրեց յանձնուելու:

Ի՞նչ ըրաւ Եզեկիա, իր գորավարները ժողովի չհրաւիրեց, իր զէնքերն ու զինամթերքը անեցնելու ջանքեր չըրաւ, ոչ ալ որոշեց յանձնուիլ: Գնաց Տէրոջը տունը, առաւ Ամասը եւ Աստուծոյ ներկայացուց, խնդրելով որ փրկէ զիրենք ահաւկու թշնամիէն: Ի՞նչ պատահեցաւ: Աստուած Անոյն գիշերն իսկ, իր հրեշտակը որկեց ու զարկաւ բանակին 185 հազար սպաննելով:

Սովորական մարդը սահմանաբակելով Աստուծոյ զօրութիւնը կ'ըսէ, անկարելի է, Հիւրոշմայի եւ Նակազագայի վրայ ինկած պոթմական ումբերը այդքան մարդեր չսպաննեց: Սակայն Աստուած անելի զօրաւոր է: Այս պատմութիւնն ալ կը վկայէ թէ Աստուծոյ ժողովուրդը ազատեցաւ:

#### 1. Աստուած բողոքովին կարող է ամենապետիւնը փրկել –

Հարց չէ թէ մարդ որքան խորացած է մեղքի մէջ, Աստուած կրնայ փրկել:

Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Քրիստոս եկաւ մեղաւորները փրկելու եւ ես անոնց գլխաւորն եմ»: Հետեւէ Պօղոսի երբ տակաւին Սօղոս անունը ունէր. փարեսեցի մը էր, կը խորհէր թէ աշխարհի լաւագոյն մարդն է, հակառակ որ կ'ստէր

Քրիստոսն ու Քրիստոնեացիները: Երբ Քրիստոնեացիները կը բռնէր, կը խորհէր թէ Աստուծոյ մեծ ծառայութիւն կը մատուցէ: Օր մը Դամասկոսի ճամբուն վրայ հանդուրեցաւ մեղքի համար ու փրկուեցաւ: Մեղաւորներուն գլխատրը, եղաւ սուրբերուն գլխատրը:

Ոչ միայն մեղքի խորութենէն կը փրկէ, այլ կատարելապէս կը փրկէ: Տէրը կը փրկէ անցեալէն, ներկայէն ու ապագայէն: «Յիսուս Քրիստոսի արինը մեզ ամէն մեղքէ կը մաքրէ»: (Ա. Յովհ. 1:7)

## 2. Աստուած կարող է քեզ պահել իյնալէ –

Յուդա–ի 24րդ համարը կ'ըսէ, «Անոր, որ կարող է ձեզ անբիծ պահել, եւ իր փառքին առջեւ անարատ կայնեցնել ցնծութիւնով»:

Ուրեմն Աստուած ոչ միայն կը փրկէ այլ յափտեան կը պահէ անոնց որ կը փրկէ:

Եթէ մարդ մը փրկութեամբ միացած է Աստուծոյ, բաժանում չկայ: Տէր եւ Տիկին կրնան իրարմէ բաժնուիլ ամուսնալուծումով կամ մահով, բայց ան որ միացած է Քրիստոսի, միացած է յափտեան: Այն հաւատքը որ կ'ըսէ. - այսօր կը փրկուիս եւ վաղը կրնաս կորսուիլ, ոչ մէկ ուրախութիւն կամ խաղաղութիւն կրնայ բերել:

## 3. Աստուած կրնայ քեզ իր ծառայութեան մէջ գործածել –

«Ես կարողութիւն չունիմ, ես բան մը չեմ կրնար ընել Տիրոջը համար»: Քանհներ նոյնանման արտայայտութիւններ կատարած են: Մտիկ ըրէ հետեւեալ խօսքերուն. - «Բայց Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց որպէսզի ամօթով ընէ իմաստունները, ու աշխարհիս տկարները ընտրեց որպէսզի ամօթով ընէ զօրաւորները...» Ա. Կորնթ. 1:27

Տէրը իմաստունի, հոշակատրի կամ հարուստի պէտք չունի, այլ պէտք ունի հաւատարիմներու:

## 4. Աստուած կրնայ իր խօստումները պահել –

Աստուած կանչեց Աբրահամը եւ տեղեկացուց թէ իրմով սերունդ պիտի տայ: Մեծ ազգ մը պիտի ընէ ու այդ ազգէն աշխարհի փրկիչը պիտի գայ: Այդ օրերուն Աբրահամ հարիւր տարեկան էր ու Սառա ինիսուն: Աստուած խօստումը կատարեց ու Իսահակը ծնաւ: Աստուածաշունչը լեցուն է խօստումներով: Աստուած կը պահէ իր բոլոր խօստումները: Իսկ մենք կը պահե՞նք մեր խօստումները:

## 5. Աստուած կարող է մեզ մեռելներէն յարուցանել –

շար. էջ 4

---

## ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻՇԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ

- Կիրակի - Առաւօտեան 11-ին Պաշտամունք  
Մանուկներու Կիրակնօրեայ
- Երեքշաբթի - Երեկոյեան 7-ին Սերտողութիւն
- Հինգշաբթի - 7-ին Երիտասարդաց Սերտողութիւն  
8:30-ին Երգչախումբի Փորձ
- Ուրբաթ - Առաւօտեան 10:30-ին Քոյրերու Ժողով  
7:30-ին Պատանեաց
- Ծաբաթ - Ամէն Ամսուայ Վերջին Ծաբաթը Երեկոյեան  
7-ին Երիտասարդ Չոյգերու Ժողով

## ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԷՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

- Անդամական ժողովը ունեցանք Փետրուար 23-ին, պաշտամունքէն ետք, եկեղեցական մարմինները հոն էին: Տեղեկութիւններ լսեցինք Կիրակնօրեայէն, Պատանձեացէն, Երգչախումբէն, Երիտասարդացէն, Քոյրերէն, Հոգաբարձութենէն, Ձայներիզներու ծառայութենէն, Հաշուապահներէն, Համացանցէն ու Եոթայի Արարատ Աւետարանական եկեղեցիէն (առաջնորդը՝ Գեորգ Պարոնեան եւ աստեանապետը՝ Յարութիւն Թօրոսեան ներկայ էին). միայն գոյգերէն ներկայացուցիչ չկար: Վերջապարտութեան հովիւն ալ տուաւ իր տեղեկագրութիւնը ու խօսեցաւ մօտիկ սպազայի փոփոխութիւններու մասին:
- Մարտ 2-ին երիտասարդաց նուագախումբը առաջին անգամ ըլլալով պիտի նուագէ ու երգէ: Աստուած երիտասարդներուն ոյժը անեցնէ ու Իր սիրոյն մէջ հաստատէ:
- Մարտ 9-ին Միութեան հովիւը՝ Վեր. Գարլ Աւագեան մեզի հետ պիտի ըլլայ ու պատգամէ Տէրունական օրուայ պաշտամունքին: Աղօթող ըլլանք Տիրոջը ծառային համար, որպէսզի իր ծանր պատասխանատուութիւններուն առջեւ մեր Տէրը առաջնորդէ ու զօրացնէ զինք:
- Ապրիլ 9-ին Եոթայի Արարատ Աւետարանական եկեղեցիին առաջնորդին պաշտօնակոչութեան-ձեռնադրութիւնը պիտի ըլլայ: Այս պաշտամունքը եկեղեցական բնոյթ կը կրէ եւ ոչ թէ միութենական: Աղօթենք որ Սուրբ Հոգին գործէ ու ամէն բան հոգեւոր, միաբան եւ արդիւնատր ըլլայ:
- Գալուստ եղբայր Մարկանեան արտի գործողութեան ենթարկուեցաւ: Աստուծոյ փառք կու տանք եղբօր վիճակին համար: Ներկայիս տան մէջ կազդուրման օրեր կը բոլորէ: Այիս քոյրը, պահապան հրեշտակ մը եղած, իր ցաւերը մոռցած նուիրեալ ծառայութիւն կը մատուցէ: Տէրը Իր սիրոյն մէջ հաստատէ ու իրենց նուիրումը կրկնապատկէ: Շուտաւիոյթ ապագինում կը մտայենք մեր եղբօրը:
- Թէեւ առանձին ու միասին աղօթեցինք, սակայն Տէրը կամեցաւ իր ծառան՝ Վեր. Եօրա Ասանէսեանը իր մօտ տանիլ: Յնցիչ էր լուրը, յուզեց բոլորս ու անցեալի յուշեր յիշուեցան, խօսակցութիւններ կրկնուեցան: Սրտանց կ'աղօթենք որ Աստուած Սուրբ Հոգիով մխիթարէ Նատիա քոյրն ու զաւակները: Թող Տէրը նոր, հաւատարիմ ծառաներ հանէ ու մեր եղբօր յիշատակը վառ պահէ:

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ Եթէ ճշմարտութիւն կ'ուզես սորվիլ, քաղցրացուր սրտիդ դառնութիւնը:
- ◆ Մէկ բարիք կայ միայն, գիտութիւնը, եւ մէկ չարիք, տգիտութիւնը:
- ◆ Մի լար որովհետեւ վերջացաւ, այլ ժպտէ որովհետեւ պատահեցաւ:
- ◆ ԾՃմարիտ ընկերը ան է որ իրապէս գիտէ քեզ, հակառակ ասոր կը սիրէ քեզ:

# Ի՞նչ ՉՀԱՎԱՏԱԼՈՒ ԲԱՆ Է

Թե՛ Մեկը ստեղծեց ողջ տիեզերքը  
Մեր մոլորակը, մեր շուրջ բոլորը  
Ջուրը, կանաչը, կենդանությունը  
Ծաղիկը, շունը, արծիվն ու մարդը...:

Մի օր այդ Մեկը երկնից վար իջավ  
Քո նման մարդու մարմնով եկավ  
Քեզ հետ նույնացավ, ցավո իմացավ  
Հաիտենական կյանքը խոստացավ:

Որ ամեն մարդ կարա ժառանգի  
Թե՛ երկինք տանող ճամփան ընտրի  
Որ չարը մերժի Բարիին հարի  
Հավատքի ճամփով առաջադիմի:

Այդ Մեկը մեռավ հետո սաղացավ  
Հարություն առած մարդկանց երեցավ  
Ու ապացուցեց որ Ինք Աստված է  
Որ կարա մեզնի հետո ապրեցնի:

Ու Ինքն իր Խոսքը ե՛րբեք չի դրժի  
Որ քեզ խոստացավ երկինք կտանի  
Ուրեմն ժպտա, հաւատքով ապրի  
Ի՞նչ չհավատալու բան է քեզի  
Թե՛ Աստված մեռելներ կհարուցանի:

Նարինե Սարգիսյան  
Հայաստան

շար. էջ 2

Յովհաննու 6-ի մէջ կ'ըսէ, «Յարութիւն առնել տամ վերջին օրը»:

Կեանքը չվերջանար գերեզմանով. Քրիստոսի գործը մեր մէջ չվերջանար մահով: Եթէ կ'ուզես, լաւագոյն բաժինէ հոն կ'ըսես: Այդ է պատճառը երբ Պիլի Կրահամ կ'ըսէ. – Կ'ըսապատեմ, կը փափաքիմ մահուան:

Երբ կը մեռնինք, մեր մարմինները կը թաղուին, մեր հոգիները Տիրոջը քով կ'երթան:

Այսօր Աստուած կայնած սրտիդ դռանը առջեւ կ'ըսէ. – Ես կրնամ փրկել, պահել, գործածել, կատարել ու յարուցանել. դուն ինձի կը վստահի՞ս:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ Տէրը կ'առաջնորդէ այս թերթիկին կամ այլ եկեղեցապատկան ծառայութիւններու նիւթական աշակցութիւն բերել, սրտանց կը գնահատենք:

**Armenian Evangelical Brethren Church**

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: [www.aebcm.org](http://www.aebcm.org) – E-mail: [aebcministries@aol.com](mailto:aebcministries@aol.com)